# ՎԱՐԴԱՎԱՌ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՊՐԻԼ 1883 Ա. ՏԱՐԻ № 9


## ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ

### ԵՐԿՈՒ ՔՈՅՐ

I.

Մի խեղճ գիւղացի իր բոլոր կեանքում
Լաւ որ չէր տեսել մեծ քաղաքում,
Դուրը տանջանքով բերինք էր իջեւել,
Իր տանրպտոյքը պահել, կերակրել.
Այս մարդին Աստուած ուրախ չէր տուել,
Երկու աղջիկ էր մի միայն բոշխել.
Թոփո-ը ագեզ ու խիստ հասուչիկ էր,
Վարդո-ը սիրուն-մեղմն կաղլիկ էր.
Խեղճ այդ իկները հէնց ուչք էին բացել,
Իրանց ծնողացը միշտ ինչ-որ տեսել.
Շուտով տարինը անցան, սահեցան,
Ու երկու քոյրը հասան մեծացան.
Նրանց տի. քաղքը մնաց միշտ փակուած,
Գարին ու կալին գէմ ընկած, կտրուած.

—Ա՛յ կին, ինչ անենք, մի օր խեղճ մարդը
Վերջապէս յայտնեց կնոջն իր դարդը.
Երեսուն տարուան մենք պսակուած ենք,
Երեսուն հազար ցաւեր կրած ենք։
Ցաւ ու կսկիծը մէկ տեղ ենք տարել,
Ամեն կսկծալիս Աստծուն փառք տուել...
Բայց ահա այսօր ուժերս թլացած,
Երեսիս մազը սիլտակած, կծղած,
Դառն աշխատանքը կոտրել է մէջքս,
Պակսել արիւնս, ցամքել քրտինքս...
—Ո՛հ, լաւ է, լաւ է, քանի ինձ այրես,
Այդ սուր խօսքերով չիգարս դաղես.
Մի՛թէ ես քեզ հետ ընկեր չեմ եղել,
Մի՛թէ ես և՛ս ուժիդ չեմ ընկել.
Կամ պակաս վախտը երբ եմ խօսեցել,
Ուրիշի նման երեսիդդ կպել...
Երսուն տարի կայ՝ քեզ հետ տանջվում եմ,
Եւ քո տանջանքը թեթևացնում եմ։
Մեր շունչ պահողը մեզ չի կորցնի,
Մի կտոր չոր հաց միշտ կը հասցնի...
Աստց խեղճ կինը, հառաչեց, լռեց,
Եւ իր արցունքը մարդիցը ծածկեց...

## II.

Գիւղացու տաւնը, արդարև, տուն չէր,
Դետնափոս որջի նա շատ նման էր.
Պատուհան չուներ. իսկ դուռը նեղլիկ,
Վերևից քացած անճոռնի երդիկ։
Ներսից չորս հատ սիւն նեցուկ էին տան,
Շէնքը ծակ ու ծակ՝ խարխալի նման...
Մի ֆիհաջ կատու միշտ մլաւում էր,
Տիրոջ ոտքերովն ընկնում-լալում էր։
Մի հոտաո շնիկ էլ շէմքումն ընկած,

Հաչել չէր կարում-այնքան էր քաղցած։
Մի քանի հաւեր քշուշ անելով՝
Շունչ էին սահում միշտ կրկչալով։
Օջաղի առջև փալաս էր քցած,
Հին հին կապերտները սնի տակ դարսած։
Մի տեղ ընկած էր դրան փակիչը,
Միւս տեղ՝ կասկարա, աւել, փ՝ըչը։
Սնիցը կախ էր հին գդալմանը,
Թոռեքին շարած աման-չամանը...
Երեկոները ճրագ չէր վառվում,
Կրակի լոյսն էր պատերին դիպչում։
Ախ ի՞նչպէս, ի՞նչպէս խեղճ էր այս տունը,
Մինչ կտրուած էր տանըցոնց քունը...

---

—Թագուշ չան, քոյրիկ, Աստուած երկուսիս
Կասես կրակ է տուել ծնողքիս.
Տես ինչպէս դառն է մեր օրերն անցնում,
Ինչպէս ամեն օր ծնողքս են լալում...
Մի օր յուսահատ խօսեց Վարդուշը,
Աչքերին դիպաւ ծակծկող փուշը։
—Էլ ի՞նչ ես լալում, սիրելի Վարդուշ,
Բաղդներս շրջվել՝ դարձել է սուր փուշ։
Մէկի եղբայրն է քրոջը պահում,
Միւսի որդիքն են ծնողքին նայում.
Մենք չունենք եղբայր, բարի ազգական,
Ո՞վ մեզ կը պահի, ասա, սիրական...
Տեսնում ես, արդէն Հայրիկն է ընկել,
Մայրիկը ոտաց վրա չորացել.
Այս բաւական չէ, մեր գարդը նրանց
Սիրտը կռծում է, թողնում շամփրած...
Արի մենք և՛ս մի կողմը թողնենք
Ամօթի քաղը, աշխատենք, գործենք.

Աշխատանքի դեմ չկայ դժուար բան,
Նա մահից անգամ ալահում է մարդկան...
Այսպէս քոյրերը իրար հետ սիրով
Ուխտեցին գործել, գործել անվրդով։

## III.

Թագուհը գիտէր երկրագործութիւն,
Շատ էլ սիրում էր ասղնագործութիւն։
Հնձին՝ ուրիշի արտն էր նա հնձում,
Խոտհարքին՝ վարձով խոտ էր ժողովում.
Կալին՝ ուրիշի կալն էր նա կալսում,
Ֆաղհանին՝ վարձով քաղհան էր անում.
Խօսքով, նա քայլի գործ էր կատարում,
Իսկ ցուրտ ձմեռը ասեղին դիմում...
Սիրուն Վարդուհը մի ոտքով կաղ էր,
Տանից դուրս գալն էլ ամաչում էր։
Իրանց տան մօտին բրուտխանայ կար.
Բրուտը Հայ էր, ղարիբ էր, օտար։
Վարդուհն ու մայրը այդ բրտի մօտին
Ամեն օր վարձով ծառայում էին,
Վախտ ցեխ շաղախում, վախտ տունը մաքրում,
Վախտ չարխը սրբում, ուսով ջուր կրում...
Երկու տարուց յետ՝ Վարդուհը սովրեց
Բրտի փեշակը—այնտեղ էլ բանեց։
Նա այնուհետև մի չոչխ սահմանեց
Իրանց տան մէջին ու բանել սկսեց։
—Էհ, բանս վատ է, էլ ինձ ի՞նչ օգուտ,
Քանի Վարդուհը էլ գարձաւ բրուտ։
Այսպէս մտածեց վարպետը անճար,
Ս՛տքի՝ տունն ընկաւ, մնաց խիստ շուար...

## IV.

Այսպէս շարունակ երկու քոյրերը
Աղաւնիների պէս դարձած տան սիրնը։
Թագուհը հօր հետ վարձկան մշակ էր,
Վարդուհը մօր հետ բրուտ-վարպետ էր։
Այս աշխատասէր խեղճ աղջիկները
Դէպ իրանց քաշեցին շատի սրտերը.
Բոլոր գիւղացիք լաւ էին տեսնում
Նրանց տանջանքը և միշտ կարեկցում։
Շատ երիտասարդ մտադրվեցին
Մինին թէ միւսին առնել իրանց կին։
Աղջկանց համբաւը ուրիշ գիւղ հասաւ,
Ամեն տեղ ասում-խօսում էին լաւ։
—Ես մշակ մարդ եմ, պէտք է ունենամ
Ինձ պէս մշակ կին՝ որ դարդ չունենամ։
Այսպէս մտածեց մի օտարական,
Եկաւ, կին առաւ Թագուհ աղջկան։
Ամանք աչք դրին Վարդուհին առնել,
Բայց սա չուզեց նրանց կին լինել։
Վարդուհի բաղդը եղաւ բրուտը,
Այդ էր պահանջում երկսի օգուտը։
Բրուտը վերցրեց իր սիրուն կինը,
Գնաց այդ գիւղից դէպ իր հօր տունը։
Թագուհին մոլորած իրանց տուն տարան։
Այդպէս երկուսն էլ մուրազի հասան...

## V.

Այս անցքից յետոյ անցան ամիսներ։
Գարունը բացուեց. եկան լաւ օրեր։
Ծնողքը աղջկանց կարօտել էին,
Նրանց տեսութեան փափագել էին։
Հայրը իր ցուպը վերցրեց, դուրս եկաւ,
Շատ գնաց թէ քիչ, ոչ ոք չիմացաւ.
Վերջապէս գտաւ նա իր Թագուհին,

Համբուրեց, գրկեց, սիրեց իր դոշին։
Ջուր բերին, նորա ոտքը լուացին,
Լաւ լաւ կերակրով նրան կշտացրին։
—Թագուշ ջան, ո՞նց էք, դէ ասա, պատմիր,
Ի՞նչպէս էք ապրում, ո՞նց է էս երկիր։
—Հայրիկ, շատ լաւ ենք, ունենք շատ ցանքեր,
Էլ տեղ չենք թողել, ցանել ենք սերմեր.
Այծ ոչխար արա որ՝ առատ անձրև գայ,
Ցանածը մէկին հազարով կը տայ...
«Որդի՛, Աստուած տայ,
որ անձրև շատ գայ...»
Այսպէս նա օրհնեց, թողեց Թագուշին,
Շատ գնաց թէ քիչ՝ գտաւ Վարդուշին։
Նորան էլ գրկեց, գգուեց ու հարցրեց,
Եւ իր հարցերի պատասխանն ուզեց։
—Սիրելի՛ հայրիկ, կաւէ ամաններ,
Շատ շատ ենք շինել, գոմի մէջ դարսել.
Դու այծ ոչխար արա, որ անձրև չը գայ,
Մեզ արև է պէտք, թող արև դուրս գայ,
Որ մենք մի կողմից ամաններ շինենք,
Մյուս կողմից՝ չորցնենք, այրենք ու ծախենք...
«Որդի՛, Աստուած տայ,
Որ անձրև չը գայ...»

---

Մի գիւղի հանդին անձրև էր շղում,
Մյուս գիւղի գլխին վառ արև փայլում։—
Թագուշանք այնքան ցորեն վերցրին,
Մինչ ամբար-հորեր ածեցին, լցրին.
Վարդուշանք այնքան ման ունեցան,
Ման ծախեցին, որ հարստացան։
Եւ այնուհետև բարի փէսայքը
Ապահովեցին աներոջ կեանքը...

Ա. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ։

Ներկայ համարում խմբագրութիւնս առաջարկում է մի խնդիր, որ պէտք է լուծուի «Եախ-մաթ» խաղի մէջ ձիու ընթացքին համեմատ։ «Եախմատի» տախտակի որ քառակուսի վերայ էլ լինի ձին, նա չի կարող գնալ մի քայլ ոչ առաջ, ոչ յետ, ոչ ձախ և ոչ աջ, այլ նա այդ քառակուսիները թողած պէտք է թռչի դոցա մօտ եղած քառակուսիների վերայ և այն էլ ոչ թէ մի ուղղութեամբ, այլ խոտորնակի։ Այսպէս եթէ ձին կանգնած լինի 44-դ քառակուսի վերայ, նա կարող է անցնել միմիայն 27, 29, 34, 38, 50, 54, 59 և 61-որդ քառակուսիները և այսպէս միշտ նոյն կերպիւ ամենայն տեղից նա կատարում է իւր ընթացքը։ Ընթերցողներին հեշտացրելիս անելու համար խմբագրութիւնս պարտք է համարում ցետեղել այստեղ «Եախմատ» խաղի հնարելու պատմութիւնը։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 |
| 25 | 26 | 27 | 28 | 29 | 30 | 31 | 32 |
| 33 | 34 | 35 | 36 | 37 | 38 | 39 | 40 |
| 41 | 42 | 43 | 44 | 45 | 46 | 47 | 48 |
| 49 | 50 | 51 | 52 | 53 | 54 | 55 | 56 |
| 57 | 58 | 59 | 60 | 61 | 62 | 63 | 64 |

Այս էր Հնդկաց իշխանութեան ժամանակներում։ Հնդկաստանի նուաճողները, դառնալով նորա իշխաններ, իւրեանց հպատակներին չէին սիրում։ Այս տեսակ անգութ իշխաններից էր և Բիգուբը, որ սարսափելի հալածում էր իւր ժողովրդին։ Բրամին Նասսիրը ժողովրդի գժբաղտութիւնից և կսկիծներից նեղացած, վճռեց խելքի բերել անսանձ իշխանին։ Նա մի խաղ հնարեց, որի մէջ այլ և այլ ոսկրեայ պատկերների տակ (ֆիգուրների) երևան էին գալիս թագաւորներ և տերութեան միւս դասակարգեր։ Այս խաղը պէտք է խաղային երկու անձն և իրաքանչիւր խաղացողի ձեռքի տակ կար մի այդպիսի տերութիւն և խաղը նրանումն էր կայանում, որ պէտք է աշխատէին թշնամի թագաւորին շրջապատել այլ և այլ ֆիգուրներով և խափան կորել նորա ճանապարհը։

Իսկ թագաւորին պաշտպանում են նորա հպատակները, որոնց մէջ և մեծ ծառայութիւն կարող էր ցոյց տալ ատորին դասակարգը, որ այդտեղ գինուորի պատկերով էր դուրս բերուած։ Այս օտարոտի հնարագիտութեան համբաւը հասաւ և պալատը և Բէգուբը, ուրախացած որ կարող է այդ նոր խաղով ժամանակ անց կացնել, կանչեց իրա մօտ Բրամինին։ Ազնիւ մարդը օգուտ քաղեց այս դիպուածքից և խաղի միջոցին սովորացրեց իշխանին թէ ինչի մէջ է կայանում ճշմարտասէր կառավարութիւնը և միևնոյն ժամանակ յիշեցրեց նորան նորա պարտաւորութիւնները։ Բէգուբը խելահաս եղաւ այդ ճշմարտութեանը և ի տրիտուր իւր սիրոյ և պատուոյ, առաջարկեց այդ խաղ հնարողին նշանակել իւրեան վարձատրութիւն։ Նասսիրը ըստ երևոյթի շատ քիչ ցորեն խնդրեց, այսինքն այնքան որքան շախմատի տախտակի վաթսուն և չորս քառակուսի վերայ կարելի լինէը դարսել. միայն թէ առաջին քառակուսի վերայ մի հատ ցորեն, երկրորդի վերայ—երկու, երրորդի վերայ—այդ թիւը երկու անգամ վերցրածը, այսինքն չորս և այսպէս շարունակաբար իւրաքանչիւր յետագայ քառակուսի վերայ նախորդ թուի երկուսը վերցրած։ Դուրս եկաւ որ Նասսիրը պահանջում էր աւելի քան 18, 446, 744, 073, 709, 551, 615, ցորենի հատիկ։ Այս չափ ցորեն տեղափոխելու համար հարկաւոր կը լինէը աւելի 625, 499, 948, 245 սայլ, և այդքան շարուած սայլերը կը բռնէին 8, 756, 995, 272 վերստ տարածութիւն։ Ցորենի շտեմարանի տէրերը զարմացմամբ տեսան որ Նասսիրի պահանջը անիրագործելի է և իրաւ այնքան մեծ էր այդ պահանջը որ ամբողջ Հնդկաստանը չէր կարող այդ կատարել։ Բէգուբը Բրամինի խընդրքից աւելի զարմացած մնաց քան նորա հնարագիտութիւնից և ընտրեց նորան իւր առաջին նախարար։ Այդ օրից երկիրը բարօրութիւն էր վայելում։

## ՁՇՄԱՐՏԱՍԷՐ ՄԱՆՈՒԿ *)

—Ի՞նչ վեց ռուբլի, ի՞նչ ես ասում. և ո՛վ կը տար քեզ այդքան փող։

—Ո՞նց թէ ով կը տար. այսօր վաճառականի համար խնդիրք եմ գրել, որ 25 ռուբլի արժէը, բայց ես 6 ռուբլի վեր առայ և բերի։

—Յետոյ ո՞ւր է. որ բերել էիր, այստեղ կը լինէր։ Տարել ես գինետուն և ի՞նձ ես հարցնում։

—Գինետուն . . և յիշեց մարդը որ դրդ մի 3 ռուբլիանոցը մանրացրուց այնտեղ, բայց միւսը մնաց իւր մօտ։ Տո՛ւր շուտով։

Եւ կանգնեց սպառնալով կնոջ առաջ։

—Հայրի՛կ, ասաց Հօրը այս ազմուկի ժամանակ զարթած Աշոտը, երևի վայր կը լինին ընկած այստեղ, և սկսեց գետնի վերայ փնտռել։

—Փնտռի՛ր, ասաց և կանգ առաւ Հայրը. իսկ դու ի՞նչ ես կանգնել փայտի պէս, յարձակուեց Հայրը Տիգրանի վրայ, շուտով փնտռիր և դու։

Տիգրանն էլ սուս ու փուս խոնարհեց դէպի գետին, ձևացնելով իբր թէ փնտռում է։

Իսկ մայրը այդ միջոցին դարձաւ դէպի մարդը ասելով՝

—Ա՛յ մարդ, ի՞նչ կը լինի այդ մնացած փողերից մեզ էգուցուան համար հացի փող տաս և եթէ դու էլ ուտել ուզում ես, այժմ քանի վաղ է, ուղարկի՛ր Տիգրանին բազար, ինչ ուզում ես բերել տո՛ւր։ Կնոջ առաջարկութիւնը դուր եկաւ մարդուն։

—Ա՛ռ այս 30 կոպէկը, ասաց մարդը կնոջ, էլ չասես թէ քաղցած եմ պահում ձեզ. իսկ դու, Տիգրան,

*) Տե՛ս «Վարժարան» № 8

գնա շուտ բազար, բեր ինձ համար մի շիշ օղի և թբթու խիար։

Տիգրանը շտապով դուրս գնաց բազար, դիտենալով որ հայրը խմիչքով կարող է հանգստանալ և մեղմանալ։

Միւս օրը Տիգրանը գնաց ուսումնարան և տեսաւ որ նորա ընկերակից Արշակը արդէն դասարանումն է։

—Մենք այսօր դասից յետոյ պէտք է խօսենք, ասաց Տիգրանը Արշակին, մի բան ունեմ քեզ պատմելու։

Եւ նորա աչքերից երևում էր, որ այդ պատմութիւնը շատ դուրեկան պատմութիւն էր իրա համար։

Տեսնողի համար անհասկանալի կարող էր թուել այդ չքաւոր երեխայ Տիգրանի և միշտ լաւ հագնուած Արշակի հետ ունեցած բարեկամութիւնը և սէրը։ Արդէն վեց ամսից աւելի շարունակվում էր նոցա ընկերակցութիւնը։ Այս երկու երեխայք մտան այդ ուսումնարան հենց միևնոյն օրը և երկուսն էլ միասին իրրև նոր աշակերտներ հին աշակերտներից շատ զրկանքներ էին կրում։ Այդ հանգամանքը եղաւ պատճառ նոցա բարեկամութեան։ Շատ անգամ մի քանի չար երեխայք յարձակվում էին Արշակի վրայ և Տիգրանը քաջութեամբ պահպանում էր իւր ընկերոջը. Տիգրանը երկար ժամանակ կարդալու դասագիրք չունէր և Արշակը միշտ բան էր տալիս իւր գիրքը։ Երկուսը միասին միատեսակ սկսեցին գրագիտութեան ուսումը։ Թէպէտ արտաքին կողմից շատ զանազանվում էին նոքա միմեանցից, բայց նոցա բնաւորութիւնը բոլորովին միատեսակ էր։ Նոքա երկուսն էլ չէին սիրում աղմուկ հանել և չարութիւն անել, այլ միշտ մի անկիւնում նստած քաղցր և հանդարտ խօսում էին միմեանց հետ, վճռելով զանազան հարցեր։ Նոքա միատեսակ ուշադրութեամբ լսում էին իրանց վարժուհու պատմածները և երկուսն էլ մեծ ցանկութիւն ունէին ամեն բան իմանալու և աշխար-

հիս երեսին եղած բոլոր գրքերը կարդալու։ Բայց զարմանալին այն էր, որ այդքան երկար միջոց նոքա թէև բարեկամ էին, բայց նոցա խօսակցութեան առարկան իրանց տան ու կացութեան չէր վերաբերում երբէք։ Սրշակը տեսնում էր որ իւր ընկերը վատ հագնուած էր և բերում էր հետը նախաճաշելու և այն էլ ոչ միշտ մի կտոր չոր հաց, նորան խեղճ էր համարում և ուրախութեան մասը ու բաժին էր տալիս իրա բերած նախաճաշից և դասական պիտոյքներից։ Իսկ Տիգրանը հէնց սկսբից իմացաւ որ իւր ընկերը երևի հարուստ է և երբէք չէր հարց ու փորձ անում դորա մասին։ Արշակը մի հասիկ զաւակ էր մի այրու։ Նորա հայրը ծառայած զինուորական էր եղել և մեռել պատերազմում։ Իւր ամուսնուց յետոյ այրին ստանում էր տարին մի չնչին թոշակ, բայց նորան օգնում էր իւր մարդու հարուստ ազգականը, երեխային ուսում տալու համար։ Նոքա հարուստ չէին, բայց մաքրասէր և հաշուով ապրող։ Մայրը գլուխը յետ գրած ունէր իւր զաւակի համար և ցանկութիւն ունէր որդուն տալ գիմնազիա, որ նա ժամանակով զինուորական կամ աստիճանաւոր լինի։

Հարուստ ազգականը խոստացել էր նորան հատուցանել գիմնազիային հասնելու վճարը, բայց գիմնազիա մտնելու համար հարկաւոր էր երեխային պատրաստել։ Այրուն խորհուրդ տուին տալ երեխային քաղաքային դպրոցը, ուր նա համարեա թէ ձրի կարող էր ուսանել։ Թէպէտ այրուն շատ հաճելի չէր իւր որդուն նստեցնել ստոր դասակարգի երեխանց հետ, բայց և այնպէս աւելորդ ծախսերից փախչելու համար, համաձայնել էր։

Դասի վերջանալուց յետոյ երեխայքը նստոտեցան տանդուխտի վրայ և խօսակցութիւնը սկսեց Արշակը։

—Ա՛հա, լսիր ինձ, Տիգրան։ Ես երեկ շատ ճշմարտասէր էի, համարեա թէ մեր վարժուհու պատմածի նման։ Ուսումնարանից որ տուն գնացի, մայրս տանը չէր։ Ես մտայ մեր հարևանի տուն։ Ծեր մարդ ու կին

ևն։ Մարդը ծառայութեան մէջն էր։ Նոքա տանը վանդակումը զանազան թռչուններ ունեն և ես միշտ գնում եմ նոցա մօտ երգերը լսելու, վանդակը սրբում եմ և թռչնիկներին կերակուր տալիս։ Ես գնացի, պառաւը խոհանոցումն էր և այնտեղից ձայն տուեց ինձ, որ մտնեմ սենեակը թռչունների մօտ։ Ես մտայ, բայց շատ քաղցած էի։ Տեսնեմ սեղանի վրայ դրած է մի ափսէ կարկանդակով լիքը. այնպէս իւղալի և կարմրացրած էին կարկանդակները, որ ես յանկարծ վրայ ընկայ, վեր առայ մէկ հատը և կերայ։ Երբ որ մտան ծերն ու պառաւը, կինը ասաց մարդուն, ահա, համեցէք, կերէք, կարծեմ այսօր կըհաւանէք»։ Ծերը կերաւ երկու հատը, ինձ տուեց մի հատը և ափսէի մէջ ոչինչ չըմնաց։—«Չէ՞ որ, ասաց պառաւը, ես չորս կարկանդակ էի պատրաստել, երեւի մէկը շունն է կերել»։ Եւ ինձ հարցրուց՝ «Արշակ, դու չը տեսար, շունն այստեղ մտել է թէ ոչ»։ Ես մտածեցի, թէ ասեմ թէ շունն այստեղ էր և նա կերաւ, ոչինչ չէին իմանալ։ Բայց չէ՞ որ այդ ստախօսութիւն կը լինէր։ Եւ ես վըճռեցի ասել ուղիղը։ Ես պատասխանեցի՝ «շունն այստեղ չէր և կարկանդը ես կերայ, որովհետև շատ քաղցած էի»։ Ասացի, բայց հետն էլ վախենում էի, թէ արդեօք ինչ կասեն նոքա։ Բայց ոչինչ, ծերը յօնքերը կիտեց և ինչ որ փնթփնթաց, իսկ պառաւը թէ՝ «լաւ որ շունը չէ կերել, քեզ հալալ»։ Եւ ես շուտով գնացի տուն, մտածելով, կերթամ վաղը կը պատմեմ Տիգրանին այս անցքը, ես չը վախեցայ և ճշմարիտն ասացի։ «Իսկ դու, Տիգրան, ինչ ես արել»։

Տիգրանը յիշեց իրանց տանը եղած—կատարուածը, ուզեց պատմել բոլորը, բայց չուզեց պարծենալ և ասաց՝

—Ո՛չ, ոչինչ չէ պատահել ինձ։

—Դու հօմ սուտ չե՞ս ասել։ Զը մոռացար արդեօք մեր երեկուան պայմանը։ Սուտ չե՞ս խօսի, ասա՛ ինձ, պահանջում էր Արշակը։

—Ոչ և ոչ երբեք, պատասխանեց Տիգրանը վճռաբար, թէև այդ խօստման կատարելը իրանց տանը շատ դժուար էր, բայց և այնպէս ոչ անկարելի։

Միւս օրը Ս.ըշակը գնաց ուսումնարան աւելի ուրախ և դասից յետոյ առանձնացած ժամանակը ցոյց էր տալիս Տիգրանին քաղցրաւենիքը, որ մայրը տուել էր նրան ճշմարտախօսութեան համար։ Եւ նա պատմեց թէ՝ «այսօր մօրաքրոջս մօտ հրաւիրուած էինք ճաշի։ Մայրս ասայ ինձ թէ այսօր մի՛ գնա ուսումնարան» գնա՛նք հիւր։ Իսկ ես ասայի թէ վարժուհին կը բարկանայ դասի չը գնալուս համար։ Նա թէ ի՞նչ կայ, կասես թէ հիւանդ էիր, գլուխդ ցաւում էր։ Ես շատ սրտով ուզում էի գնալ մօրաքրոջս տուն, այնտեղ շատ հիւրեր պիտի լինէին. բայց յետոյ մտածեցի՝ եթէ հիւր գնամ և ասեմ վարժուհուս թէ ուսումնարան չեկայ հիւանդութեան պատճառով, ուրեմն պիտի սուտ ասէի։ «Ոչ, ասայի մօրս, աւելի լաւ է հիւր չը գնալ, ես կերթամ ուսումնարան, սուտ ասելը մեղք է»։ Մայրս շատ ուրախացաւ և շուտով գնեց ինձ համար զանազան քաղցրաւենիք, գովելով ինձ։ «Տեսնո՛ւմ ես, Տիգրան, կարծես վարժուհու պատմածի նման է իմ արարմունքը»։

(Կը շարունակուի)։

Թարգ. Գ. Տ. Ա.

## ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ.

*Ուղերարձ №-ի մէջ գտնուած զուարճալիքներուն բացատրութիւնը։*

56) Դարմանի տակ ջուր։

57) Իմաստուն մարդու խօսքը մի սերմ հատիկ է բարեբեր հողի մէջ։

58) Երկու գլուխ մի բերան փոր թափին ամէն կերան։

59) Ուղտի կատակը կամուրջի վրայ է բռնում։

60) Ձին ձորումը պոչն երթիկումը։

61) 1. Ն ի ց Ա.
2. Ա բ ա Զ.
3. Լ ա ւ Ա.
4. Ֆ ի բ Տ.
5. Անանուն.
6. Ն Ա.
7. Դելֆի Ս.
8. Եփրա Տ.
9. Աբդի Ու
10. Նորմանդի Ա.
11. Յ ի Ծ.

62) Սան (կաթսա). Սան Սանդ. դուխտ (աղջիկ) ուխտ։ Կ=60, Ո=600, Յ-300, Ս=2000.
Սան դուխտ Կոյս։

63) (Առաջ. Ս. Գայ. օր. միջ. ուս. 5 դաս. աշակ. Ս. Ղարագեօզեանց)

Մի բառ ունեմ երեք վանկից. վերցրու առաջին վանկ՝ կը ստանաս ճաշակ բառի նոյնանիշը. դէն ձգէր մի տառ՝ կը ստանաս 365 օր. դորան աւելացնես երկրորդ վանկս, կը ստանաս՝ մի բան որ չբազացպանին է հարկաւոր։ Երկրորդ

*վանկս վերցնես՝ բերք բառի նոյնանիշը կը ստանաս, դորան մի տառ աւելացնես երրորդ վանկից, գիշերը քեզ պէտք եկող բան կը ստանաս. դէն ձգիր երրորդ վանկից մի տառ ուտելիք կը ստանաս:*

64) (Առաջ. Յովհ. Կոստանեանց):

Առաջին և երկրորդ վանկը Հայոց նահապետի անուն է. երրորդ վանկը՝ «տեղեկութիւն» խօսքի նոյնանիշ է, իսկ ամբողջը Հայոց աստուածներից մէկի անուն է:

65) (Առաջ. Եօթնամեայ օր Մարգ. Բաբայեանի:)

Առաջին վանկն է մի բոյս, որ լինում է բանջարանոցում, երկրորդը սայլի մի մասն է. ամբողջը-մի թռչուն է, իմացէք ինչ է:

66) Սև արաբ բեհեն ոլորեց
Անչափ հազար մարդ գլորեց:

67) Անոլոր դերձան.
Անճակ մարգարիտ.
Աստուած կը շարէ.
Մարդը կը քաղէ:

68) Հանք, հանք հրամանք
Օխտը դրան դէմ հանաք:
(Առաջ. Ներ. պ. աշակ. Սարգ. (Աւետիսեան:)

69) (Առաջ. Վարդ. Եղիազարեանց Ղզլարեցի:)

Այն ինչ բան է որ աշխարհի ստեղծուելուցը մինչև հիմայ կայ և միշտ կայ ու կը լինի, բայց մի ամսական էլ չը կայ:

70) (Առաջ. Նոյն անձի)



*Այս հինգ սենեակից վերցնել երեք պատ այնպէս որ մնայ երեք ամբողջ սենեակ միմեանց կպած:*

(Առաջ. Էջմիածնի ճեմ. Ա. լսարանի ուսանող Մ. Գանագեօղեան։)

«Եախմատի» ձիու ընթացքով։

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 11 Апрѣля 1883 г.
Типографія М. Вартанянца и К. Тройцк. пер. № 11.

Իմ հանգուցեալ եղբայր ԱՌԱՔԵԼ ԲԱԲԱՅԵԱՆ ԲԱՀԱԹՐԵԱՆԻ մանրամասն կենսագրութիւնը գրած ունեմ հրատարակելու համար։ Բայց կամենալով աւելի լիակատար և մշակուած դուրս բերել, խնդրում եմ բոլոր ծանօթներից և բարեկամներից՝ անյապաղ հաղորդել ինձ՝ տեղեկութիւններ հանգուցեալի կեանքին և նրա հասարակական գործունէութեան վերաբերեալ։

Адресъ: Въ Шушу, Николаю Б. Багатурьянцъ.

Նիկոլայ Բ. Բահաթրեան.

---

Նոր Նախիջևանի և Բեսարաբիոյ Թեմական Պլրանոցի տեսչական պաշտօնը թափուր մնալով Պ. Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆԻ մահուամբը, նոյն Պլրանոցի Հոգաբարձութիւնը խնդրում է ցանկացողներին՝ յայտնել Հոգաբարձութեան իւրեանց յօժարութիւնը յանձն առնուլ այդ պաշտօնը։

Պլրանոցի Տեսչի պարտաւորութիւններն են, իբրև նորա մերձաւոր կառավարող՝ հսկել և պահպանող լինել ներքին բարեկարգութեան և յառաջադիմութեան նորին ըստ ամենայն մասանց (Կանոնագր. Պլր. յօդ. 29)։

Պլրանոցի Տեսուչն ընտրի յուսումնական և յարժանաւոր եկեղեցականաց կամ աշխարհականաց՝ աւարտելոց գընթացս ուսման Ի Ճեմարանի մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի կամ Ի Բարձրագոյն ուսումնարանս Տէրութեան (յօդ. 30)։

Տեսչութեան համար թոշակ սահմանուած է տարեկան 1800 րուբլի, բացի Ի քնակարանէն և վառելեաց, ևս և միոյ առարկայի ուսուցչութեան ռոճկէն, որ ունի ստանալ առանձին՝ ըստ թուոյ դասուցն (յօդ. 31)։

Պլրանոցի այլ կանոնաց և դրութեան ծանօթանալ ցանկացողներին կը յուզարկուի նորա տպագիր կանոնագրութիւնը։

Նախագահ Խորհրդոյ Հոգաբարձուաց՝

ՍՈՒՔԻԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

„ՎԱՐԺԱՐԱՆԻ“ Խմբագրութիւնը վոխադարձաբար ընդունելով Կ. Պոլսում հրատարակուող „ԲՈՒԼՈՒՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ“ մանկական թերթի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ, պատիւ ունի սորանով յայտնելու, որ բաժանորդ գրուել ցանկացողք կարող են դիմել Խմբագրութեանս, վճարելով կանխիկ տարեկան ՉՈՐՍ ռուբլի։

---

1882 թուիյ Ռուսաստանում տպագրուել են հետևեալ հայերէն գրքերը և վաճառվում են Թիֆլիզի Գրավաճառների մօտ.

(շարունակութիւն *).

| | | | |
|---|---|---|---|
| ԲԱՖՖԻ. Խաչագողի յիշատակարան . . . . . | 1 | ռ. | 20 կ. |
| „ Կայծեր I հատոր . . . . . | 2 | „ | — „ |
| ԲԱՀԱԹՐԵԱՆ Քերականութիւն աշխարհիկ լեզուի . | — | | 25 կ. |
| „ Համառօտ գործական հոգեբանութիւն | 1 | ր | — „ |
| „ Ուղեցոյց Հայ—ուսուցչի—(Մեթօդիկայ) | 1 | „ | — „ |
| „ Ա յբբենարան—I տարի . . . . . | — | | 4 „ |
| „ Ընթերցարան II տարի . . . . . | — | | 20 „ |
| „ Մանկական պարտէզը կամ ծաղկոցը և նորա նշանակութիւնը . . . . . | — | | 5 կ. |
| Ա. Մ. Ե. Պ. Ծաղկունք (թարգմանական) . . | — | | 25 „ |
| Ա. Տէր-Ցակոբեան—Հայրենագիտութիւն . . . | — | | 60 „ |
| Մ. Վ. Բարխուդարեանց—Պըլը Պուդի . . . . | 1 | ռ. | — „ |
| Յ. Նազարեանց Աննկդոտներ III հ. . . . . | — | | 50 „ |
| Պ. Ազայեանց. Ուս. մայր. լեզ. Ընթերցարան II և III տ. | — | | 45 „ |
| Ն. Տէր-Ղևոնդեան. Մայրենի լեզուի քերականութեան տարէրքը I մ. . . . . | — | | 30 „ |
| Ա. Թոխմախեան. Մասիս լեռների Հարաւ. ստորոտ. | — | | 30 „ |
| Լեռնից—Ազատ ծամեր . . . . . | — | | 30 „ |
| Սունդուկեանց—Խաթաբալա. . . . . | — | | 50 „ |
| Զ. Գրիգորեան. Ուսուցիչ ռուսաց լեզուի . . . | — | | 20 „ |
| Ամանասեանց. Երևանու Բուսաբանութիւն . . | — | | 50 „ |

(կը շարունակուի)

---

*) Տես „Վարժարանի“ կազմ. № 3։